Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

(*Կ-515-12.03.2020-ՏՏԳԲ-011/0*) «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, փոփոխության (լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը փոփոխությունը (լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջակությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	ՀՀ Կառավարություն	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքում կատարվող փոփոխությունների և լրացման մասին օրենքի 4-րդ հոդվածում կատարել փոփոխություններ:	Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 1. սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները վեցամյսա ժամկետում սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:	Ընդունվել է՝ կատարվել է համապատասխան լրացում	Ընդունվել է

			2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշցած ըստ համայնքների կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկման կարգը վեցամյսա ժամկետում սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: 3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հաշվետվության ձեւը եռամսյա ժամկետում հաստատվում է տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից:» :		
2.	ՀՀ Կառավարություն	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքում կատարվող փոփոխությունների և լրացման մասին օրենքի 5-րդ հոդվածում կատարել փոփոխություններ:	Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Մինչ սույն օրենքի առաջին հոդվածով սահմանված ցանկի սահմանումը սույն օրենքի կարգավորումները, ի լրումն բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանելու թույլտվություն ունեցող ընկերությունների, տարածվում են նաեւ «ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓԸՐ ՓՐՈԳՐԱՄ»,	Ընդունվել է՝ կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է

			«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ», «ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ», «ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)», «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ», «ԳԱՋԵԳՈՐԾ», «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ», «ՆԱԻՐԻՏ ԳՈՐԾԱՐԱՆ» եւ «ԳԱՋ» փակ բաժնետիրական ընկերությունների, «ԱՐՄԵՆԻԱՆ ՄՈԼԻԲԴԵՆ ՓՐՈԴԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության,«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ», «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» եւ «ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» բաց բաժնետիրական ընկերությունների բնապահպանական հարկերի վրա:» :		